

# ՄԵՆԱԲԱՌՈՒՅԹԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՂԱՐՁՎԱԾԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ\*

Նաիրա Մելքոնյան  
*Երևանի պետական համալսարան*

**Տ**րանսերենի դարձվածակազմությանն առնչվող կարևոր երևույթ է *մենաբառայթացումը*, որի արդյունքում դարձվածքի բաղադրիչները ձուլվում են միմյանց և կազմում նոր բառ: Այսինքն, իր իմաստային ամբողջականությանը զուգահեռ՝ դարձվածքը ծեռք է բերում նաև կառուցվածքային ամբողջականություն: Այս երևույթը բնորոշելու համար *մենաբառայթացում* բառի փոխարեն կարելի է գործածել նաև *ապադարձվածայնացում* եզրույթը, քանի որ դարձվածքը վերածվում է բառի՝ մենաբառայթի: Ընդ որում, մենաբառայթացումը բուն դարձվածակազմության հետ առնչվում է այնքանով, որ ցույց է տալիս դարձվածքի կառուցվածքային և իմաստային փոխակերպության որոշակի փուլը:

**Բանալի բառեր.** մենաբառայթացում, դարձվածակազմություն, ապադարձվածայնացում, իսկական և անիսկական բարդություններ, իմաստային ինքնուրույնություն, բազմաբառայթացում, նախդրավոր կազմություններ:

## Ներածություն

Ինչպես հայտնի է, դարձվածքը հակադրվում է նախադասությանը կամ ազատ բառակապակցությանը իր կազմի մեջ մտնող տարրերի իմաստի և քերականական կարգերի մթազմամբ: Այլ կերպ ասած, ի տարբերություն նախադասության, դարձվածքը կազմում է ձևաիմաստային մեկ ամբողջություն:

Պակաս կարևոր չէ դարձվածքի և բառի կառուցվածքային-իմաստաբանական փոխհարաբերությունների հարցը: Որպես կանոն, դարձվածքի կազմի մեջ մտնում են մեկից ավելի բառեր (առանձին բառը հազվադեպ կարող է դարձվածքի արժեք ունենալ), որոնք կառուցվածքային առումով միմյանցից տրոհված են: Ճիշտ է, դրանք հանդես են գալիս որպես իմաստային մեկ ամբողջություն՝ մասամբ կամ լիովին զրկված լինելով իրենց նախնական իմաստներից, սակայն կառուցվածքային տեսակետից պահպանում են իրենց ինքնուրույնությունը: Հետագա զարգացման ընթացքում դարձվածքի կազմի մեջ մտնող բառերը հաճախ ձուլվում են իրար և կորցնում ինքնուրույնությունը: Այլ կերպ ասած, տեղի է ունենում մենաբառայթացում՝ դարձվածքը վերածվում է բառի:

Եթե այս գործընթացը օրինաչափ է, և երկու բաղադրիչ իրար միանալով կազմում են նոր բառ, ապա հարկ է ճշտել վերջինիս տեսակը: Այստեղ հիմնական կողմնորոշիչը այդ նոր միավորի նախկին՝ դարձվածային իմաստն է ու կառուցվածքը: Ակնհայտորեն տվյալ դեպքում խոսքը բարդ բառերի ստեղծման մասին է, քանի որ գործ ունենք մեկից ավելի բաղադրիչների միավորման հետ:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 21.07.2016:

## **Իսկական և անիսկական բարդություններ**

Ըստ ավանդական դասակարգման, բարդ բառերը (բարդությունները) բաժանվում են երկու խմբի՝ իսկական և անիսկական: Մանուկ Աբեղյանը, խոսելով իսկական բարդությունների մասին, տալիս է դրանց հետևյալ սահմանումը՝ *Իսկական բարդությունների երկու բաղադրիչ մասերը միշտ միացած իբրև մեկ բառ են գրվում, և երկուսը միասին մեկ նշանակություն ունեն* (Աբեղյան 1974:137):

Սրանից հետևում է, որ դարձվածքները (բազմաբառույթ միավորները) վերածվելով բառի (մենաբառույթի) դառնում են իսկական բարդություններ: Այսպիսով, իսկական բարդությունների կազմի մեջ մտնող բառերի իմաստների մթագնումը տեղի է ունենում այն փուլում, երբ դարձվածքը դեռ չի վերածվել մենաբառույթի:

Եթե իսկական բարդությունները բնորոշվում են իրենց բաղադրիչների նախնական իմաստի մթագնմամբ, ապա անիսկական բարդությունների բաղադրիչ-բառերը պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը: Իմաստային տեսակետից իսկական բարդությունները մոտենում են դարձվածքներին, իսկ անիսկական բարդությունները՝ ազատ կապակցություններին: Դարձվածքի և բառի այս հարաբերություններն ունեն հետևյալ պատկերը.

1. Իսկական բարդություն (բաղադրիչների բուն իմաստների մթագնմամբ)-դարձվածք (բաղադրիչների բուն իմաստների մթագնմամբ) :

2. Անիսկական բարդություն (բաղադրիչների բուն իմաստների ինքնուրույնության պահպանմամբ) — ազատ կապակցություն (բաղադրիչների բուն իմաստների ինքնուրույնության պահպանմամբ):

Սրանց պետք է ավելացնել նաև քերականական կարգերի խնդիրը: Եթե դարձվածքների կազմում մթագնում են նաև բառերի քերականական-շարահյուսական հարաբերությունները, ապա իսկական բարդություններում մթագնում են բառերի հոլովական հարաբերությունները: Հասկանալի է նաև, որ ազատ կապակցություններում բառերը պահպանում են իրենց քերականական-շարահյուսական կապակցվածությունը, իսկ անիսկական բարդություններում՝ հոլովական հարաբերությունները:

## **Ֆրանսերենի նախդրավոր կազմությունները**

Դարձվածքների և բառերի այսօրինակ համեմատությունը հնարավորություն է տալիս ճշգրտելու դարձվածքների կազմավորման և զարգացման առանձնահատկությունները: Ճիշտ է, մենք այսօր դարձվածքներն ընկալում ենք իբրև պատրաստի խոսքային միավորներ և հաշվի ենք նստում դրանց կառուցվածքային և իմաստային ամբողջականության հետ, սակայն իրականում դրանց որոշ մասը աստիճանաբար մենաբառույթի վերածվող լեզվատարրեր են: Հակառակ ճանապարհով գնալու դեպքում կարող ենք նկատել, որ իսկական բարդությունների մի մասը մենաբառույթի վերածված դարձվածքներ են: Նման պայմաններում հիմնական հարցն այն է, թե լեզվի զարգացման ո՞ր միտումն է գերիշխող՝ մենաբառույթացումը, թե՞ բազմաբառույթացումը:

Այն լեզուների դարձվածակազմության մեջ, որտեղ տարբերակվում են գոյականի սեռը և առումը, տեղի են ունենում այլ գործընթացներ ևս: Դարձվածքի կազմի մեջ մտնող բառերի սեռը կամ որոշյալ-անորոշ առումը նույնպես ձուլվում են դարձվածքի ընդհանուր իմաստին: Այլ կերպ ասած, բառիմաստի մթագնումը զուգորդվում է քերականական կարգերի մթագնմամբ:

Գրավոր աղբյուրների ոչ բավարար քանակը, ինչպես նաև ժողովրդական լատիներենի բառարանների բացակայությունը դժվարացնում են խնդրի ամբողջական ու համակողմանի ուսումնասիրությունը: Մասնավորապես, մինչև օրս պարզաբանված չեն մենաբառայացման՝ բազմաբառայացման միավորի խտացման առանձնահատկությունները: Եթե ընդհանուր գծերով պարզ է դարձվածակազմության փոքրիշատե ամբողջական պատկերը, ապա նույնը չենք կարող ասել հակառակ գործընթացի մասին, քանի որ այդ երևույթին նվիրված առանձին հետազոտություններ չկան: Որպեսզի ստանանք մենաբառայացման վերածված բառակապակցությունների թեկուզ մոտավոր թվաքանակը, անհրաժեշտ է մեկ առ մեկ քննել ֆրանսերենի բոլոր բաղադրյալ բառերը և պարզել, թե դրանցից քանիսն են նախկինում եղել բազմաբառայացման միավորներ:

Ստորև ներկայացվում են այն մենաբառայությունները, որոնք ձևավորվել են ֆրանսերենի պատմական զարգացման ընթացքում: Նման մենաբառայությունների թվին են դասվում հատկապես նախդրավոր կազմությունները:

Նախդրավոր կազմություններից բացի, ֆրանսերենում գոյություն ունեն մեծ թվով այլ խտացված արտահայտություններ, որոնց ուսումնասիրությունը դուրս է ներկա աշխատանքի շրջանակներից:

Արդի ֆրանսերենի կայուն բառակապակցությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը կազմված է զանազան նախդիրներով ու նախածանցներով՝ *à, pour, con, par, en* և այլն: Մյուս կողմից նկատում ենք, որ այդ նույն նախդիրները, չնայած հնում օժտված էին բառակազմական արդյունավետությամբ, ծուլվելով բազմաբառայության կազմում հանդես եկող բառերին, կորցրել են իրենց ինքնուրույնությունը: Բացառված չէ, որ այս կառույցների մի մասը ձևավորված լինի ոչ թե կայուն, այլ ազատ կապակցությունների հիմքի վրա: Այդուհանդերձ, *à, con (com), en, entre, par, pour* նախդիրներով ու նախածանցներով կազմված դարձվածների առատությունը հիմք է տալիս ենթադրելու, որ հնում ևս դրանք օժտված են եղել բառակազմական արդյունավետությամբ:

**1. Ֆրանսերենում *à* նախդիրը** աչքի է ընկնում լայն գործածականությամբ, և բառակազմության մեջ թերևս ամենաարդյունավետն է: Չխորանալով *à* նախդիրի գործառական առանձնահատկությունների մեջ՝ ներկայացնենք դրանով կազմված մի քանի արտահայտություն.

*à la fois* — միանգամից

*à la dérobée* — ծածուկ

*à demeure* — հաստատուն կերպով

*à peu près* — մոտավորապես

*à tout le moins* — ծայր աստիճան

*à titre de* — որպես

*prendre à cœur* — սրտին մոտ ընդունել

*avoir à cœur* — իր պարտքը համարել

*voir à l'oeil nu* — անզեն աչքով տեսնել:

Նման արտահայտությունների ու դարձվածքների թիվը կարելի է անվերջ շարունակել, սակայն կարծում ենք բերված օրինակներն էլ բավարար են *à* նախդիրին վերապահված բացառիկ դերը ցույց տալու համար: Ըստ էության, կարող

ենք ասել, որ *à* նախդիրը դարձվածակազմության անկյունաքարերից մեկն է: Բերված օրինակներում *à* նախդիրը գործածվում է մյուս բաղադրիչներից առանձին, անջատ, և այս առանձնահատկությունն էլ հենց տարբերում է բազմաբառային մենաբառային տվյալ դեպքում իսկական բարդություններից:

Սակայն լեզվի զարգացման հետագա փուլերում *à* նախդիրը ծուլվում է իրեն հաջորդող բաղադրիչին և կազմում մենաբառային:

Ապադարձվածայնացման կամ մենաբառայնացման այս երևույթը հաստատվում է բազմաթիվ օրինակներով: Նշենք դրանցից մի քանիսը՝

*abaissier* v. (*à et baisser*) իջեցնել. *s'abaissier à* բարեհաճել

*abasourdir* v. (*à et basourdir* “tuer”) խլացնել

*abêtir* v. (*à et bête*) հիմարացնել

*accoupler* v. *à qch* (*à et couple*) միացնել

*accroire* v. (*à et croire*) *faire accroire* հավատացնել հորինվածքի

*accroupir* v. (*à et croupe*) թեթև կաղալ

*adoucir* v. (*à et doux*) քաղցրացնել, մեղմել

Ինչպես տեսնում ենք, բերված ձևերը բավականին մեծաքանակ են: Կառուցվածքային տեսակետից դրանց հիմնական մասն արտահայտում է պատճառականի իմաստ և համապատասխանում է հայերեն *ացն, եցն, ցն* միջածանցներով կազմված ձևերին.

*abaissier* — իջեցնել

*abasourdir* — խլացնել

*abêtir* — բթացնել, հիմարացնել:

Հայտնի է, որ պատճառական իմաստը կարող է արտահայտվել նաև վերլուծական եղանակով. ֆրանսերենում այդ գործառույթով օժտված է *faire* բայը, իսկ հայերենում՝ *տալ-ը*: Սրանից բխում է, որ բերված կազմությունները իմաստային-գործառական առումով համապատասխանում են հետագա շրջանում *faire* բայով կազմված վերլուծական միավորներին.

*accoupler* = *faire couple*

*abâtardir* = *faire bâtard*

*adoucir* = *faire doux*

Այս տեսակետից ուշագրավ է *accroire* — *ստիպել հավատալ, մոլորության մեջ գցել* բայը, որը սկզբնապես լինելով ազատ կապակցություն՝ *à* և *croire*, ու արտահայտելով պատճառական իմաստ՝ հետագայում սկսել է գործածվել *faire* բայի հետ՝ վերածվելով այսպես կոչված *կրկնակի պատճառականի*: Այլ կերպ, *accroire* բայի մեջ մթագնել է պատճառական նախկին իմաստը և ձևավորվել *faire accroire* պատճառական բայի վերլուծական ձևը:

Եթե բերված մենաբառայինները համեմատենք *à* նախդիրով կազմված բազմաբառայինների հետ, ապա կնկատենք, որ տվյալ դեպքում մենաբառայինի և բազմաբառայինի տարբերությունը հանգում է բացառապես շարույթի միասնա-

կանությանը: Նախդրավոր կառույցներում նախդիրները գրվում են բառից առանձին, քանի որ դրանց և բառերի միջև գոյություն ունի դադար, և երբ այդ դադարը վերանում է, վերանում է նաև բազմաբառային-մենաբառային հակադրությունը:

Նշված օրինակները վեր են հանում ֆրանսերենի բառակազմության և դարձվածակազմության մեկ այլ առանձնահատկություն ևս: Ինչպես ցույց են տալիս *abaïsser, abonner, accrocher, acharner* և այլ օրինակներ, *à* նախդիրն ունի բառակազմական երկակի գործառնություն: Այն մի կողմից հանդես է գալիս մենաբառայնացված տարրի կազմում որպես վերջինիս առաջին բաղադրիչ, մյուս կողմից կրկնվում է (շարահյուսական մակարդակով) նույն մենաբառայինից հետո՝ *s'abaïsser à, s'abonner à*: Ստացվում է, որ *à* նախդիրը երկու կողմերից *օղակում է* այս կամ այն բառը՝ մի դեպքում հանդես գալով ձուլված տեսքով, մյուս դեպքում պահպանելով իր հիմնական գործառնությամբ:

**2. Ֆրանսերենում *con (com)* նախածանցը** նույնպես օժտված է բառակազմական արդյունավետությամբ: Գալով դարձվածակազմական արդյունավետությանը, կարելի է ասել, որ այստեղ վիճակն անորոշ է, քանի որ *con (com)* ձևային արդի ֆրանսերենում չի պահպանել իր ինքնուրույն գործածությունը և հանդես է գալիս բացառապես բարդությունների կազմում: Այս պայմաններում մենք չենք կարող *con (com)* նախդիրով կազմված մենաբառայինները համեմատել նույն տարրերով կազմված դարձվածքների՝ բազմաբառայինների հետ, քանի որ վերջինները պարզապես գոյություն չունեն:

Ֆրանսերենում *con (com)* ձևային տեղի է տվել *avec* հոմանիշի ճնշման տակ, որը ենթաշերտային տարր է և գալիս է հնից: Այս առումով ուշագրավ է, որ *avec* նախդիրը ամրապնդել է իր դիրքերը դարձվածքներում, մինչդեռ *con (com)* տարբերակը կշիռ է ստացել բառածանցման մեջ:

Բերենք *avec* նախդիրով կազմված մի քանի վերլուծական բառամիավոր՝

*faire avec* – գոհանալ, բավարարվել  
*se lever avec le jour* – արևածագին արթնանալ  
*distinguer un ami d'avec un flatteur* – տարբերել ընկերոջը շողոքորթից  
*arriver avec la nuit* – մութն ընկնելուն պես գալ

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս և նման դարձվածքներից ոչ մեկում *avec* բառը չի կարող փոխարինվել *con (com)* տարբերակով: Սրանից բխում է, որ *con (com)* -ը չի կարող մենաբառայինում և բազմաբառայինում միաժամանակ կրկնվել: Փոխարենը *con (com)* ձևայինով կազմված մենաբառայինները լայնորեն գործածվում են, ինչպես օրինակ՝

*combattre avec (con + battre + avec)*  
*commercer avec (com + mercer + avec)*  
*comparaître avec (com + paraître + avec)*  
*concentrer avec (con + centrer + avec)*, և այլն:

Ինչպես նշեցինք, *avec* նախդիրը բառակազմական հնարավորություններ գրեթե չունի: Ըստ էության, ֆրանսերենում չկա որևէ բարդ բառ, որի բաղադրիչներից մեկը լինի *avec* նախդիրը: Պատճառը, կարծում ենք, *avec* նախդիրի կա-

ռուցվածքն է, քանի որ բաղկացած լինելով երկու վանկից և ավարտվելով *c* (*ly*) պայթականով՝ *avec* նախդիրն ունի բառակազմական սահմանափակ հնարավորություններ: Ըստ այդմ՝ ֆրանսերենում գոյություն չունեն *\*avecparaitre*, *\*aveccentrer*, *\*avecmander* և նման տիպի այլ մենաբառայիններ: Գալով *con* (*com*) տարբերակին, ապա լինելով միավանկ և ավարտվելով *n* բաղաձայնով՝ վերջինս հեշտությամբ կարող է կցվել իրեն հաջորդող բառերին և կազմել մենաբառային: Ընդ որում, եթե հաջորդող բառը սկսվում է շրթնային բաղաձայնով, ապա *con* նախդիրը վերածվում է *com*-ի:

Ահավասիկ *con* (*com*) ձևությամբ կազմված մի քանի մենաբառային՝

*combattre* v. (*cum* “avec”, et *battuere*) պայքարել

*commander* v. (*com*, et *mandare* “confier”) հրամայել

*commercer avec qn, qch* v. (*com*, et *merx, mercis* “marchandise”) առևտուր անել

*compresser* v. (*com*, et *presser*) ճնշել

*concentrer* v. (*con*, et *centrer*) կենտրոնացնել:

Հարկ է նշել, որ բազմաթիվ դեպքերում *con* (*com*) ձևությամբ կազմված մենաբառայինները կարող են ստանալ նաև այլ նախածանցներ՝ էլ ավելի խտացնելով նոր ձևավորված կառուցվածքը, ինչպես օրինակ՝

*recommander* (*re* + *com* + *mander*)

*déconcentrer* (*dé* + *con* + *centrer*)

*décompresser* (*dé* + *com* + *presser*)

*décommander* (*dé* + *com* + *mander*)

## Եզրակացություն

Այսպիսով, մենք դիտարկեցինք մենաբառայինացման երկու տարբերակ, որոնք ձևավորվել էին *à, con* (*com*) նախդիրների ու նախածանցների հիմքի վրա: Այս գործընթացի ընդհանուր օրինաչափությունն այն է, որ ազատ կամ կայուն բառակապակցությունների բաղադրիչները ձուլվում են և վերածվում մենաբառայինների: Ընդ որում, դարձվածքներից ծագած մենաբառայինները աչքի են ընկնում իրենց իմաստների առավել լիակատար մթազմամբ և համապատասխանում են իսկական բարդություններին, մինչդեռ ազատ կապակցություններից ծագած մենաբառայինները դեռևս պահպանում են բաղադրիչների առանձին իմաստները, որոնցով մոտենում են անիսկական բարդություններին: Իրենց հետագա զարգացման ընթացքում նոր ձևավորված մենաբառայինները համալրվում են նոր տարրերով և կրկին վերածվում կայուն կամ ազատ կապակցությունների:

Մենաբառայինացումը բառակազմական երևույթ է և, ըստ էության, բարդություն բառի հոմանիշն է: Երկու դեպքում էլ երկու կամ ավելի բառեր միանում են իրար և վերածվում բարդության կամ մենաբառայինի:

Բառակազմական երևույթները բազմաթիվ են և բազմազան, սակայն մասնագիտական գրականության մեջ բավարար ուշադրություն չի դարձվել բազմաբառային մենաբառային անցման առանձնահատկություններին: Խոսքն այն մասին է, որ օժտված լինելով իմաստային և քերականական որոշակի հատկանիշներով՝ միմյանց ձուլվելիս և նոր բառ կազմելիս բառերը կրում են էական փո-

փոխություններ՝ կորցնելով իրենց քերականական կարգերը և զրկվելով իրենց նախնական իմաստներից: Նոր կազմավորված բառաձուլվածքներն իրենց մեջ խտացնում են իմաստային և քերականական բոլոր հատկանիշները: Շատ դեպքերում բառաձուլվածքների կազմի մեջ մտնող բառերը կամ տարրերը արդեն իսկ արտահայտում են վերացարկված իմաստներ, ուստի մենաբառային կազմում դրանք ենթարկվում են կրկնակի վերացարկման: Խոսքը հատկապես նախդիրներով կազմված դարձվածքների մասին է:

Այսպիսով, մենաբառայնացումը լեզվական համընդհանուր երևույթ է և պայմանավորված է, ամենից առաջ, ինչպես խոսքի տնտեսման, այնպես էլ արտահայտվելիս նվազագույն ջանք (ձիգ) գործադրելու փոխկապակցված ու միմյանց լրացնող հայտնի սկզբունքներով: Այս առումով մենաբառայնացումն աղերս ունի հապավումների հետ, քանի որ հաղորդակցվելիս (բանավոր թե գրավոր) երկու դեպքում էլ խնայում ենք ժամանակը, տեղը, և նվազեցնում ֆիզիկական ու մտավոր լարումը :

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան, Ս. (1974) *Հայոց լեզվի տեսություն*: Երևան: Սելբոնյան ֆոնդի հրատարակություն:
2. Աղայան, Է. (1984) *Ընդհանուր և հայկական բառագիտություն*: Երևան: ԵՊՀ հրատարակչություն, (371):
3. Պետրոսյան, Հ. (1987) *Հայերենագիտական բառարան*: Երևան: Հայաստան:

### **Monolexicalization as the Main Device of Dephraseologization**

Monolexicalization is an important phenomenon related to the formation of phraseological units in the French language, due to which the semantic components of a phraseological unit are merged and a new word is formed. In other words, the phraseological unit, parallel with its semantic unity, also gains semantic and structural entity. In order to characterize this phenomenon, we can use the term *dephraseologization* instead of *monolexicalization*. Thus, having transformed into a word, the phraseological unit stops being such a unit. Moreover, monolexicalization is related to the formation of phraseological units to show how the latter undergo structural and semantic transformation at a certain stage.

### **Лексикализация как основное средство дефразеологизации**

Одним из важных явлений французского фразеобразования является лексикализация, в результате чего компоненты фразеологического оборота сливаются друг с другом и составляют новое слово. То есть, наряду со смысловым единством, фразеологизм приобретает и структурное единство. Для характеристики данного явления можно использовать также термин дефразеологизация, поскольку оборот перестает являться таковым, превращаясь в слово. Таким образом, лексикализация относится к фразеобразованию постольку, поскольку отражает определенный этап структурной и смысловой трансформации фразеологизма.